

ՊՐՈ ԿՈՆՍՏՐԱԿՏ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«24» 10 2023

2210 ՀՀ Կոտայքի մարզ, Առինջ Բ թաղ. 1-ին փող. թիվ

N 10/01

Հեռ. 077906005

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավար՝
Պարոն Բ. Չաքարյանին,
Պրո կոնստրակտ» ՍՊԸ տնօրեն
Նարեկ Գևորգյանից

Դ Ի Մ ՈՒ Մ

Հայտնում եմ Ձեզ, որ «Պրո կոնստրակտ» ՍՊ ընկերությունը մտադիր է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Հաշվի առնելով, որ երկրաբանական ուսումնասիրությունը «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ենթակա է փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն)՝ ինդրում եմ Փորձաքննության շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ Ձեզ վերապահված լիազորությունների շրջանակում և ժամկետներում նշանակել և կազմակերպել հանրային քննարկում ընկերության կողմից կից ներկայացվող ուսումնասիրության աշխատանքների ծրագրի վերաբերյալ:



Ինդրում եմք նաև մեզ տրամադրել Ծրագրի իրականացմանը Ձեր նախնական համաձայնության մասին գրություն:

Կից ներկայացվում է ծրագիրը՝ բաղկացած 4 էջից:

Հարգանքով՝

Տնօրեն

Ն.Գևորգյան



ԾՐԱԳԻՐ

ՀՀ Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 2024-2026թթ. աշխատանքների

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | |
|--|---|
| 1. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԵՆԹԱԴԻՎՈՂ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ..... | 1 |
| 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿՆԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԱՎՈՐ ԾԱՎԱԼՆԵՐԸ | 1 |
| 3. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ | 3 |
| 4. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 4 |
| 4.1. Մթնոլորտային օդ | 4 |
| 4.2. Ջրային ավազան | 4 |
| 4.3. Հող..... | 4 |
| 4.4. Կենսաբազամազանություն | 5 |
| 4.5. Պատմամշակութային ժառանգության պահպանություն | 5 |

1. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԵՆԹԱԴԻՎՈՂ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Կատարվելիք աշխատանքի նպատակը Տերտերասարի ոսկու հանքավայրի ռեսուրսային և տնտեսական ներուժի նախկին գնահատականները արդիականացնելն է:

Նախատեսվում է.

- ճշգրտել հանքավայրի նախկինում հաստատված պաշարների մնացորդը,
- ընտրել հանքավայրի հետագա շահագործման համար առաջարկվելիք լեռնային աշխատանքների և հանքաքարի հարստացման տեխնիկատեխնոլոգիական և կազմակերպական հարցերի լուծման առավել ռացիոնալ տարբերակները,
- բացահայտել կախվածությունները հանքաքարի որակի և դրա հարստացման ռացիոնալ տարբերակին համապատասխանող հիմնական տեխնոլոգիական ցուցանիշների (հարստացման արգասիքները, ելքերը, մետաղների կորզումը հանքաքարից և դրանց պարունակությունները խտանյութում և հարստացման պոչերում) միջև,
- հիմնավորել հանքավայրի կոնդիցիաների նոր պարամետրեր՝ դրա շահագործման ռացիոնալ տարբերակին, տեխնիկայի ու տեխնոլոգիայի զարգացման, ինչպես նաև շուկայի արդի վիճակին համապատասխանող,
- ղեկավարվելով կոնդիցիաների նոր հիմնավորված պարամետրերով՝ վերաբերազդել և վերահաշվարկել հանքավայրի պաշարներն ու ապահովել դրանց հաստատումը լիազոր մարմնի որոշմամբ:

Այդ աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2024-2026թթ. ընթացքում:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿՆԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԱՎՈՐ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Սույն ծրագիրը ելնում է հետևյալ իրողություններից.

ա) հանքավայրի վերջին գնահատումն իրականացվել է 2003 թվականին ավանդական եղանակով, առանց տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորման,

բ) հանքավայրը շահագործվել է ընդհուպ մինչև 2012թ.: Դրա մերձակերևույթային մասերում պարփակված օքսիդացած հանքաքարն արդյունահանվել է բացահանքով, իսկ սուլֆիդային հանքաքարով ներկայացված խորը հորիզոնները մշակվել են ստորգետնյա եղանակով,

գ) հանքավայրից արդյունահանված հանքաքարի վերամշակումը իրականացվել է Այգեծորի հարստացուցիչ ֆաբրիկայում, և դրա մասին ֆոնդային նյութերում ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ հանքաքարի հարստացման ռացիոնալ տեխնոլոգիայի ընտրության հարցում հստակ կողմնորոշվելու համար,

դ) հանքավայրի շահագործմամբ մարվել են հիմնականում C₁ կարգի պաշարներ և հաստատված պաշարների մնացորդի գերակշիռ մասը ներկայացված է C₂ կարգի պաշարներներով,

ե) պաշարների շարժի վերաբերյալ 5-ՕՂՀ ձևի հաշվետվությունների համաձայն՝ հանքավայրը 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնութագրվում է սահմանափակ ռեսուրսային ներուժով և, միևնույն ժամանակ, հանքաքարի բավականին բարձր կորզվող արժողությամբ,

զ) պետական հաշվեկշռում հաշվառվող հանքավայրի պաշարները եզրագծվել են՝ ղեկավարվելով ոսկու ցածր գնի (8.3 \$/գ) պայմաններում հիմնավորված կոնդիցիաների բավականին կոշտ պարամետրերով, որոնք ենթակա են վերանայման՝ արտադրության եկամտային և ծախսային ցուցանիշների արդի մակարդակների հաշվառմամբ:

Հաշվի առնելով նշյալ իրողությունները՝ հանքավայրի վերագնահատման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Հանքավայրի մասին մինչ օրս կուտակված երկրաբանական տեղեկատվության օգտագործմամբ տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորում, այդ թվում.

- ֆոնդային նյութերի հավաքագրում և համակարգում,

- հորատանցքերի սունյակների, այլ հետախուզափորվածքների գծապատկերների, նմուշարկման մատյանի, հիմնական և ստուգողական քիմիական անալիզների, ինչպես նաև ֆիզիկամեխանիկական փորձարկումների արդյունքների, հանքավայրի մակերևույթի տոպոգրաֆիական քարտեզի, ստորգետնյա հետախուզափորվածքների մարկշեյդերական հատակագծերի, երկրաբանական քարտեզների և կտրվածքների, ուղղաձիգ հարթության վրա հանքամարմինների պրոյեկցիաների, այլ առաջնային փաստագրման և ամփոփ երկրաբանական նյութերի թվայնացում:

2. Պահպանված ստորգետնյա հետախուզափորվածքների համապատասխան միջակայքերից ոսկու տարբեր պարունակություններով թվով երեք՝ յուրաքանչյուրը 100կգ զանգվածով, լաբորատոր-տեխնոլոգիական նմուշների ձևավորում:

3. Հանքաքարի հարստացման լաբորատոր-տեխնոլոգիական փորձարկումների իրականացում՝ դրա հարստացման ռացիոնալ սխեման հիմնավորելու, ինչպես նաև՝ հանքաքարի որակի և տեխնոլոգիական հիմնական ցուցանիշների միջև կախվածությունները բացահայտելու նպատակով:

4. Ոսկու միջին պարունակությամբ 10 հազ.տ հանքաքարի արդյունահանում՝ գործարանային պայմաններում տեխնոլոգիական փորձարկումներ իրականացնելու նպատակով:

5. Աշխատանոցային աշխատանքներ, այդ թվում.

ա) վերջին անգամ հաստատված պաշարների մարված և մնացորդային մասերի որակաքանակական ցուցանիշների գնահատում՝

- դրանց շարժի վերաբերյալ 5-ԳԴ ձևի ամենամյա հաշվետվությունների տվյալներով,

- համապատասխան տիրույթները եզրագծելու և ուղղակի հաշվարկներ իրականացնելու արդյունքներով,

բ) մարված և մնացորդային պաշարների վերոնշյալ եղանակներով հիմնավորված որակաքանակական ցուցանիշերի տարամիտության գնահատում՝ դրա բաղդատմամբ ըստ ծնող պատճառների:

6. Հանքավայրի հետագա շահագործման տեխնիկատեխնոլոգիական և կազմակերպական հարցերի համար նախատեսվող լուծումների հիմնավորում:

7. Հանքավայրի հետագա շահագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսում:

8. Հանքավայրի պաշարների եզրագծման համար անհրաժեշտ կոնդիցիաների պարամետրերի կազմի և չափաքանակների հիմնավորում:

9. Հանքավայրի վերահաստատվելիք պաշարների եզրագծում (հիմնավորված կոնդիցիաների պարամետրերով) և հաշվարկ:

10. Կատարված վերագնահատման աշխատանքների վերաբերյալ հաշվետվության կազմում:

Հանքաքարի լաբորատոր-տեխնոլոգիական փորձարկումների համար ելանյութը ներկայացված է լինելու ակոսային նմուշներից ձևավորված մետաղների տարբեր պարունակություններով թվով երեք 100-ական կգ զանգվածով խմբային նմուշներով: Ակոսները անցկացվելու են էլեկտրական սղոցներով, հատիչով և մուրճով:

Լաբորատոր-տեխնոլոգիական փորձարկումները իրականացվելու են պայմանագրային եղանակով՝ «Լեռնամետալուրգիական ինստիտուտ» ՓԲԸ-ի ուժերով:

Գործարանային պայմաններում տեխնոլոգիական փորձարկումներ իրականացնելու մասին կա պայմանավարվածություն Կապանի լեռնահարստացման ֆաբրիկայի հետ, և նախատեսված 10 հազ.տ ընդհանուր զանգվածով հանքաքարի փորձնական հանույթը համապատասխանում է ֆաբրիկայի 5-օրյա պահանջարկին:

3. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Երկրաբանական ուսումնասիրության շրջանակներում բոլոր աշխատանքներն իրականացվելու են առողջության պահպանության և աշխատանքախնայողության ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ձեռնարկողն իրականացնելու է միջոցառումներ արտադրական տրավմատիզմը բացառելու ուղղությամբ, սահմանված ժամանակացույցով, առնվազն եռամսյա պարբերությամբ աշխատողները կանցնեն աշխատանքների անվտանգ կատարման հրահանգավորում: Աշխատանքի նոր ընդունվող բոլոր աշխատողները կանցնեն անվտանգության տեխնիկայի պարտադիր նվազագույնի ուսուցում: Աշխատողները կապահովվեն կոնկրետ աշխատանքների անվտանգ կատարման հրահանգներով, համապատասխան արտահագուստով, անհատական պաշտպանության միջոցներով:

Բոլոր մեքենաների և մեխանիզմների կառավարումը կվստահվի միայն այն աշխատողներին, որոնք ունեն համապատասխան որակավորում, դրանք կառավարելու իրավունք, «Օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև այդ իրավունքը հավաստող փաստաթուղթ»:

Պայթեցման աշխատանքների ժամանակ պահպանվելու և իրականացվելու են «Օրենսդրությամբ և համապատասխան կանոնակարգերով ամրագրված անվտանգության պահանջները և միջոցառումները»:

Հանքուղիների վերականգնողական աշխատանքները սկսելուց առաջ բոլոր բովանդեքերի վիճակը ստուգվելու է լեռնափրկարար ծառայությունների կողմից և աշխատանքները կմեկնարկեն միայն նրանց գրավոր թույլտվությունից հետո:

Ստորգետնյա հանք մտնող բոլոր աշխատակիցները ապահովվելու են անհրաժեշտ արտահագուստով և համապատասխան կանոնակարգերով սահմանված անհատական պաշտպանության միջոցներով:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով իրականացվելու են բնապահպանական միջոցառումներ:

Շրջակա միջավայրի վրա անցանկալի ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված միջոցառումները դասակարգվում են ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների՝ մթնոլորտային օդ, ջրային ավազան, հող, կենսաբազմազանություն և սոցիալ-մշակութային միջավայր:

4.1. Մթնոլորտային օդ

- Պայթանցքների հորատումը նախատեսվում է ջրի մատուցմամբ, ինչը կրճատում է փոշու արտանետումները:

- Աշխատանքային տեղերի գոտիներում և օդափոխության թարմ շիթի ուղիներում նախատեսվում է փորվածքների պատերի պարբերաբար լվացում փոշուց:

- Պարբերաբար ստուգվելու է փորման տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և կարգաբերվելու՝ անսարքությունների հետևանքով արտանետումների ավելացում թույլ չտալու համար:

- Տաք և չոր եղանակին հանքի մերձատար ճանապարհները և բովանցքերի արդյունաբերական հրապարակները պետք է ջրցանվեն՝ փոշու արտանետումները կրճատելու համար

- Հանքանյութի տեղափոխման ժամանակ բեռնատարների թափքը ծածկել՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար

4.2. Ջրային ավազան

- Նախատեսվում է իրականացնել բովանցքերից դուրս եկող ստորգետնյա ջրերի մշտադիտարկումներ

- Ստորգետնյա տեխնիկայի սպասարկման աշխատանքներն իրականացնել բովանցքներից դուրս՝ տարբեր թափոնների և մասնավորապես՝ նավթամթերքների արտահոսքը բացառելու և ստորգետնյա ջրային հոսքերի դրանցով աղտոտումը կանխելու նպատակով

- Ժամանակավոր կույտերի երկայնքով նախատեսվում է կազմակերպել ջրհեռացման առուներ

- Ջրցանի համար օգտագործվելու է ջրի այնպիսի ծավալ, որ հոսքեր չառաջանան

- Անհրաժեշտության դեպքում կնախագծվեն ջրի մեխանիկական մաքրման ավազաններ

4.3. Հող

- Արտադրական հրապարակների կառուցումից առաջ հանվելու և պահեստավորվելու է հողի բերրի շերտը (դրա առկայության դեպքում)

- Տեխնիկական և տրանսպորտային միջոցների լիցքավորումը, ընթացիկ սպասարկումը և վերանորոգումը կատարվելու է մասնագիտացված տեխսպասարկման կետերում

- Հողի աղտոտումը կենցաղային թափոններով կանխելու նպատակով սննդի ընդունման, հիգիենայի և աշխատակազմի հանգստյան վայրերում տեղադրվելու են աղբամաններ

4.4. Կենսաբազամազանություն

Երկրաբանական ուսումնասիրության ուրվագծում ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող հատվածներ կամ այդպիսի տարածքների սանիտարական գոտիներ:

- Աշխատանքների ընթացքում բացառվելու է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս
- Կենդանիների տեղաշարժի սահմանափակումներ չառաջացնելու համար ապարկույտերը շրջանցող առուների վրա կտեղադրվեն կամրջակներ
- Բնադրման և թխսման շրջանում այդ գործընթացի վրա ազդեցության դիսկ ունեցող աշխատանքների իրականացումը բացառվելու է:

4.5. Պատմամշակութային ժառանգության պահպանություն

Ընկերությունը մինչ հայցվող տարածքի կոորդինատների վերջնական որոշումը համապատասխան պետական լիազոր մարմնից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հայցելու և ստանալու է տեղեկատվություն ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված հուշարձանների, դրանց պահպանական և պահպանության գոտիների կոորդինատների մասին տեղեկատվություն: Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքի կոորդինատները կկազմվեն այնպես, որ այդ տարածքում ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված հուշարձաններ և (կամ) դրանց պահպանության և պահպանական գոտիներ չլինեն:

Ի լրումն դրա՝ բուն աշխատանքների իրականացման ընթացքում հայտնաբերվող, հնարավոր պատմամշակութային արժեք ներկայացնող իրերի, առարկաների և այլ օբյեկտների պահպանությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվելու համար մշակվելու և ներդրվելու է պատահական գտածոյի պահպանության ընթացակարգ: